ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 24-ին կայացրած նիստի

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Սիրուշ Սարգսյանի, Գայանե Ալեքսանյանի, Վերնաշեն գյուղի բնակիչներ Արմենակ Մարգարյանի, Սիրվարդ Պարսամյանի դիմումներն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

<u>ՈՐՈՇԵՑ</u>

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Սիրուշ Սարգսյանին, Գայանե Ալեքսանյանին, Վերնաշեն գյուղի բնակիչներ Արմենակ Մարգարյանին, Սիրվարդ Պարսամյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Գանձաղբյուր>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան